

ՀԱՅ ԵՐԱՅ

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԱԳՌԱԻՈՒ

Հետեւեալ խորհրդակցած ենք Ս. Արուստիս ք. 1485 ձեռագրէն, որ Երուսաղեմի մէջ գրուած է ԺԷ. դարու կիսուն, նոսր գրով:

Այս խորհրդակցած ենք հրատարակուած են արդէն, մին Գ. Վ. Մուսանձեանցի Մանանային մէջ, էջ 263, եւ միւսը Կ. Կոստանեանցի Միջնադարեան Տաղերու Նոր ժողովածուին Բ. Գրական մէջ, էջ 33:

Ներկայ փոփոխակը հրատարակուածներէն բաւական կը տարբերի, եւ ունի նորոգ տողեր — 7, 8, 12, 13, 14, 20, 24 — որոնք նախորդներուն մէջ չկան:

Մեր մեղքն է արեր զագուան բազայ
Կրտուցն է սրբեր պողպատու նուքտայ,
Ի բարձր է թռեր կու կանչէ դա, դա,
Որ տեղ գունըզգուն հաւի թեփուր կայ:

Ագուան է ժողվեր եւ հագեր կապայ
Թեւերն է լարեր կու կանչէ դա, դա,
Ժողովեցան ագուաներն երամով առ նայ
Դատաստան կանեն կու կանչեն դա, դա:

Ագուան է հագեր աթլաս ու բիմխայ
Վրդան է քաշեր կանաչ դատիֆայ,
Ի բարձր է թռեր կու կանչէ դա, դա,
Եկէք որ երթանք ուտենք թարխանայ:

Ագուանը զինքըն կու կարծէ բազայ
Ինքն ի արծուին մօտըն կու կենայ
Կասէ ես ի ձեր մէջն եմ ամիրայ
Ի բարձր է թռեր կու կանչէ դա, դա:

Արծիւ գայն լրսեց անկաւ ի ղուսայ
Ի յօդիցն ի վայր քան չարխի նետ գայ
Բռնէ զագուանըն ու կու տայ ցէգայ
Զկարէ բարձրանալ կու կանչէ դա, դա:

Ագուան է հրպարտ մարդ որ մէջլիս գայ
Թէպէտ որ լինի նա ծանր ամիրայ,
Տան ի վերայ գլխուն ասեն լա, լա, լա,
Փողիման երթայ նա ի վայր մընայ:

Հրատ. Ն. Վ. Մովսէսյան